

## ԱՐԻԱՎԱՐԴԱՐ ՍՈՒՆԴԱԾ

### ՀԵՐՈՍՏՐԱՏ

Լուդվիգ Ֆուլդա (Fulda), գերմանացի յայտնի թատերագիր և բանաստեղծ, ծնուած 1862 թ. ուսումնասիրել է գերման լեզուները, գրականութիւն և վիխսովայութիւն Հայդելբերգի, Բերլինի և Լայպցիգի համալսարաններում։ Սկզբում, երբ ապրում էր Միւնխենում, գտնուում էր Պոլ Հայզէի ազգեցութեան աակ։ Նորա հէնց առաջին թատերկը, մի գործողութեամբ, Die Aufrichtigen (Անկեղծներ) գրուած 1883 թ. մեծ յաջողութիւն ունեցաւ։ 1886 թ. Բերլինում առանձին ուշադրութիւն գրաւեց Deutsches Theater-ում ներկայացնելով իւր մի գործողութեամբ Unter vier Augen.—Թատերկի յաջողութիւնն առիթ տուեց նշանաւոր դերասան Բարնային դրդել ֆուլդային մի նոր թատերկ գրելու իւր նոր հիմնած «Բերլինի թատրոն» ի համար։ Այդ նոր երկն էր Die Wilde Jagd (1888, Վայրի որս), որ անաօնի յաջողութիւն ունեցաւ։ Այդ բալոր երկերի մէջ ֆուլդան անհատական կեանքի շրջանից դէնը չէր անցնում։ Վերջին երկում մի քանի ողբերգա-զաւեշտական տեսարանների մէջ պատկերացնում է մարդկանց՝ բաղդի յետեից ընկնելու անյագ ձգտումը, որ սակայն իւր հերոսների համար միշտ վերջանում է անվերջ հիասթափութեամբ։ Բերլինում ծանօթանալով երիտասարդ գրողների շրջանի հետ, տարւում է հասարակական հարցերով և փորձեր է անում թատրոնական բեմ հանել հասարակութիւնը յուղող դասակարգութիւնների ճաքառման պատկերներից զանազան տեսարաններ։ Das verlorene Pauradies (1890, Թրախտ կորուսեալ) նիւթին առնուած է բանուորական գործադրուներից, որի մէջ նկարագրուում է գործող անձինքների ողբերգական յարաբերութիւնները։ Աւելի պակաս յաջողութիւն ունե-

յառ 1891 թ. բեմ հանած Die Skeavine (Ստրկուհի), որի մէջ պատկերացնում է կնոջ դառն վիճակը: Վերջին երկերի պատկերացրած չոր ու ցամաք իրականութիւնն առաւելապէս արդիւնք էր այն գրական շրջանի, որի մէջ էր և Ֆուլդան, քան բուն իւր սեփական տաղանդի, որ կատարելապէս փայլեց միայն իւր վերջին ողբերգական Talisman առակի մէջ, որ մեծ ոգևորութեամբ ընդունուեցաւ «Կերմանական-թատրոնում» 1892 թ.: «Թալիսմանի» նիւթը, համարեա, նոյն է, ինչ որ Անդերսէնի «Թագաւորի նոր հանդերձը»: Զնայելով նիւթի հեքիաթական բովանդակութեան, բայց և այնպէս բոլոր գործող անձնաւորութիւնները ներկայացրած են պարզ, որոց գոյներով և շատ տիպական են: Ֆուլդայի միւս երկերը, ինչպէս Die Kameraden (1894, Ընկերներ), Der Sohn des Chalifen (1897, Խալիֆի որդին), Թալիսմանի պէս ողբերգական նիւթ է, բայց Բերլինի հասարակութեան աւելի քիչ դուր եկաւ, քան Թալիսմանը, Jugendfreunde (1897 թ. Սրիտասարդական բարեկամներ), Schlaraffenland, նոյնպէս ողբերգական առակ և Herostirat պատմական բովանդակութեամբ մի ողբերգութիւն:— Ֆուլդան ունի նաև բազմաթիւ քնարերգութիւններ, որոնք աչքի են ընկնում զգացմունքի ջերմութեամբ և անկեղծութեամբ: Ֆուլդայի երդիծարանութիւնները և վերտառութիւնները (ասիգրամմա) աչքի են ընկնում նույրը և կծու սրամտութեամբ: Ֆուլդային քնարական երկերը հրատարակուած են Satura. Grillen und Schwänke (1884, Լայպց.) Neue jugend (1887). Sinngedichte (1888, Գրէզգ. թ. հրատ. 1893 թ.), Gedichte (1890, Բերլին), Neue Gedichte (1900). Ֆուլդայի վեպիկները հրատարակուած են Lebensfragmente խորագրով (թ. հրտ. 1896 Շտուտգարտ): Բացի դորանից Ֆուլդայի թարգմանութեամբ հրատարակուած են Մօլիէրի լաւագոյն երկերը (թ. հրտ. 1895) և Ռոստանի «Ռոմանատիկներ» և «Սիրանօ-դը-Բերժըրակ» ողբերգութիւնները:— Կիւրշների Deutsche Nationalliteratur-ի մէջ հրատարակել է Die Gegner den zweiten Schlesischen schule Երկրորդ շեղիական դպրոցի հակառակորդները (Շտուգ. 1788):

## ԳՈՐԾԱՌԻ ԸՆԴՐԵՐ

---

Հերոստրատ.	Դիոն
Տիմարիտա-նորա մայրը.	Մենիպպական-ներ.
Գեղեսիյ.	Զօյա
Կլիտիա-նորա թոռը.	Լիսիլլա
Մետրոդոր լսորհրդի	Փէօնիդա
Թրասոն անդամներ	Կապիյ
Ծաղկյու-մեծ քրմապետ	Դիօկլ
Պրակսիտել.	Զինուոր

Նաւահանգստի պահապան.

Քրմեր եւ քրմուհիներ, ստրուկներ.

Ուխտաւորներ, Նաւաստիներ, Ժողովուրդ,

Զօրականներ:

Գործողութեան տեղը՝ Եփեսոս (Յունաստանում):

Ժամանակը՝ 356 թ. Ք. Ժ. Ա.

---

## Ա. ԴԱՐՄՈՂՈՒԹԻՒՆ

Բաց հրապարակ Եփսոսում Յետեկ մասը, համարեա ամբողջապէս բռնում է Արտեմիսի սահմարի ու Յնոսի Ճակատը նորա պղնձակերտ դաների առաջ դանում է լոյն մարմարինէ սանդուղներ, սանդուղնի երկու կողմը մի-մի ձգովահաճ, Տաճարի յետեկ մասում երկում է ժայռուս լեռների Ամելի հեռու յետեկ մասում երեսում է նաւահանդուսի մի մասը՝ խարիսխ ձգած նաւահովի Աջ կողմը համաս, ցածլիկ մի անակի, շրջապատուած անտառակով, անակի առաջ մի նստարան Աջ կողմը, բոլորովին առաջին տեսարանի վրայ երեսում է փոյքիկ պատահուստ բարձրավանդակի, վրան փորուած ստեսանեղեով որոնք գեղցչյների (Կուլիս) յետեկ կորչող կածանի սիկորն են ցցց տալիս Զախ կողմը, առաջի մասում, բաւական գուրք ընկած՝ երեսում է Մետրոտիքի տունը, երկու գանզով, մէկը ճակատի կողմից, ուղղուած հանդիսականներին, մըսը կողմակի: Մի քէչ հեռու, ձախ կողմը Գեղեցիի տունը, որ բաժանուած է Մետրոտիքի տնից փողոցով, բաց սրահակով (portique), որ ծառայում է երբեք վաճառանոց. սրահակի ներսի պատերից կախիսուած է ըրօնինց կահաներ, զէնք և ուրիշ գեղարուեստական իրեղներ:

## ՏԵՍՄԱԾԱԿԱՆԻ, I.

Արևադադ է: Տաճարի սանդուղների վրայ նստուած է ժողովուրդը. նոցանից սմօնիք ազօթում են Տաճարից լսում են երաժշտութեան մղջմ ձայներ, նաւահանդուսում նաւաստիները շլթաներով ամրացնում են նաւը և բեռը գուրս տալիս, երեսում է նաւի մի մասը միայն:

ՀԵՐՈՈՍԹԱՑ (նստուած է անշարժ, աջ կողմը գտնուող անակի առաջ եղանքարէ նստարանի վրայ, մէջը հանդիսականներին, խորասուղուած տաճարը դիտելով Քիչ յետոյ երեսում է օտարերկրացիների խումբը, որի մէջ են ԴԻՕՆ և ՄԵՆԻՊԱ, (Յետոյ) ԳԵՐԵՆԵՍԻՑ:

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ. — (Խմբովին, հանդիսաւոր կերպով):

Ո՞վ, մայր կենաց, սուրբ Արտեմիս,  
Լուսաթաթախ ապարանքում  
Թագաւորող հզօր, ահեղ,  
Մեծ դիցուհի, արծաթփրփուր  
Ծովով պատած Յունաստանի  
Եւ գեղեցիկ, զուարթ Յոնիոյ

Քաջաբազուկ որդիներից  
Սրգուած Դշխոյ, զաւակներդ  
Ա՛ռ տպահով քո յարկի տակ  
Եւ սրտազեղ, տուատ աջով  
Օրհնէ նոցա:

(Դիմել, Մենիպպը և միւս օտարականները, ճանապարհ  
Հի զգեստով, մոնում են նաւահանգստի կողմից և կանգա-  
նում են ապշած ու շլացած տաճարի տեպբով):

- ԴԻՌՆ.** Երկար ուղու նպատակ կէտին  
Հասանք արդէն: Բարեկամներ,  
Լաւ դիտեցէք: Արշալոյսի  
Նիրանազգեստ շողերի մէջ  
Մեծ դիցուհու յաւէժ, անանց  
Փառաց տաճարն, հազար-հազար  
Ազգ ու լեզուից փառարանած  
Մեհեանն՝ ահա, դիմաց կանգնած:  
Տարտարոսի աստուածներին  
Փառք, գոհութիւն մենք առաքենք,  
Որ մեր կեանքին նոր թոյլ տուին  
Եւ վեհութիւնն աշխով տեսանք:  
**ՄԵՒՆԻՊՊ.** Գերերջանիկ, չքնաղ քաղաք,  
Փառքիդ շողերն ողջ աշխարհն է  
Ողդել, լցըել:

- ԳԵԳԵՍԻԹ.** (Դոււր դաւդ իւր անէց, Խօսում է երեսը յետ-  
դարձրած):

Ե՛յ, տնալիտան  
Ծոյլ ստրուկներ, դէհ, շուտ արէք,  
Ժիր շարժուցեք: Զէք աեսնում, որ  
Նաւերն ահա՝ շարան-շարան,  
Մըցման ելած, առաջկարուկ  
Նաւահանգիստ են շտապում,  
Առատ, անթիւ ուխտաւորներ  
Փաղաք բերում, որոնց զեղուն  
Կըրօնտական ջերմ զգացում  
Պիտի լայն-լայն բանայ նոցա  
Քըսակների բերանները,  
Այստեղ եկէք, հետներդ առէք,  
Այստեղ բերէք աստուածուհու

Մաքուր կաւից, փայլուն պղնձից  
Հրաշակերտած արձանիկներն.

(Հետեւեալ խօսակցութեան ժամանակ ստրուկները որու-  
հակն են բերուած Եփեսոսի Արտեմիսի արձանիկները, առ-  
ճարի փոքրիկ յարանմասութիւնները և այլն և շարում  
են վաճառքի հանելու համար—

Դիբնն ու Միհիպպոլ բաժանուելով միւսներից, առաջ  
են զայլու գեղեսին բարեւում է նոցա)։

ԱՌ, ողջոյն ձեզ, օտար երկրից

Մեզ հիւր եկած բարեկամներ:

Գրազ կը զամ, թէ առաջին

Անդամը չէ, որ Եփեսի

Հողի վերայ ոտք էք դնում:

ԴԻՌՆ. Ճիշտ այդպէս է, ծերուկ յարդի:

ԳԵԳԵՍԻՑ Ո՞ր աշխարհի ծնունդ էք դուք:

ԴԻՌՆ Սիցիլիայի լի գայտերն են

Մեզ սնուցեն, իսկ Սիրակուղն

Մեզ իւր որդի՝ քաղաքացիք

է ճանաչել:

ԳԵԳԵՍԻՑ

Շատ էլ մօտ չէր,

Հերմէս վկայ, այն ճանապարհն,

Որ կտրեցիք, անցաք եկաք:

Բայց աւելի լաւ ժամանակ

Ընտրել երբէք չէիք կարող:

Հազիւ, ահա, նոր է սկսուած

Աստուածունուն ձօնած ամիսն:

Արամազդից մեզ զարգեած

Ամեն մի օրն՝ իրեն յատուկ

Ակնապարար հանդէսն ունի,—

Մարզանք թէ վագք՝ կառքով, ոտով

Երդ ու պարեր՝ խենթ, յամրաքայլ,

Խնճոյք ու խինդ՝ ամեն օր կայ:

Նոյն իսկ այսօր դուք կը տեսնէք

Տաճարի մէջ մատաղ կուսից

Վառ ըղձերի շքեղ հանդէս:

ԴԻՌՆ

(Դաշնաւով գեղի ուժարը)

Ասա, խնդրեմ, ինչո՞վ արդեօք

Ցաւերժացրեց շնորհապարա

- ԴեԳԵՍԻՑ** Հայրենիքը՝ կէս-աստըծուն:  
**ԴԻՈՆ** Որի՞ մասին ես հարցընում:  
**ՄԵԾ** Այս տաճարը կերտող, կանգնող  
 Մեծ վարպետի՝ Պայոնիայի:  
**ԴԵԳԵՍԻՑ** Հէնց իմ հաւս է, հօրս պապը.  
 Հայրս դեռ շատ լաւ յիշում էր  
 Մեծ ծերունի արուեստգէտին:  
**ՄԵՆԻՊՊ** Ազնիւ ցեղի շառաւիդ ես:  
**ԴԵԳԵՍԻՑ** Մեծ նախահօրս բռլոր սրտովս  
 Շնորհապարտ եմ. աշխատանքի  
 Ծանր ու դժուար բեռն ու հոգսը  
 Իւր ուսերի վերայ տարաւ,  
 Խոկ ինձ թողեց փառք ու մուտքի,  
 Եկամուտի անհատ այս գանձ:  
 Կարող կինէր, քաղաքն արդեօք,  
 Սորանից էլ մեծ յարդ ցոյց տալ  
 Արուեստգէտի յիշատակին,  
 Քան արտօնել նորա զարմին  
 Սրբավայրի փակկալ լինել,  
 Վաճառք հանել նորա անդրին՝  
 Իւր խոկ գաւթում:

**ՄԵՆԻՊՊ** (Ցաց տալով յետէի, խորեի կողմը).  
 Ինչո՞ւ, ասա,

- Տաճարի ծանր, պղնձակերտ  
 Դռներն՝ երկփեղկ, լայն բացուեցան:  
**ԴԵԳԵՍԻՑ** Ասել է թէ, զոհաբերքի  
 Մէսերն, արդէն, աւարտեցին.  
 Եւ նփեսի պայծառ զարմը  
 Դիցանոյշի շնչով սրբուած  
 Սուրբ թափորի զլուխն անցած  
 Մեզ է դիմում:

Թափորը դուրս դալով տաճարից, առաջ է զնում գէ-  
 պի աջ յետոյ նորից սանդուղաներն ելնելով մոնում է  
 տաճարը Առջեկից դնում են փողահարներ, որոնք երգեալ  
 երեան հետեւում են հանդիսական փողերը և շեփորնե-  
 րը, քարոզները՝ ձեռքերին բռնած դայխոններ. Եպէտը  
 յետեկից քրմր և քրմուհիներ. քաղաքի աւագները, որոնց  
 մէջ երեւում է Մետրոդոր. յետոյ երիտասարդներ, կու-

սեր, որոնց մէջ և Կվածիան։ Ժողովուրդը բնմի խորպումը  
յարդանքով տեղի է տալիս Թափորին և երբ Թափորը  
հեռանում է, նորա յետեկց իրար հրելով տաճար են  
թափում։)

## ԳԵԳԵՍԻՑ

(Բացատրում է փողերի հեշտում դադարելու բազէներին)։

Տեսէք, ահա։

Քայլերն ուղիղ աստուածունու  
Դէպ սրբազն անառառ դարձան։  
Խոնարհ ու հեղ ամբոխի տէր  
Մեծ քրմապետն՝ քարողների <sup>1)</sup>։  
Անվերջ շարքին անմիջապէս  
Հետեւում է վեհ քայլուածքով։  
Մեծարելի ծերերն ամեն  
Զուտ տօնական պերճ հագուստով։  
Նոցանից յետ՝ կրնկակոխ  
Զոյգ-զոյգ, կարգով, շարան-շարան  
Նրիտասարդ, պատանիներն  
Եւ ամօթխած չքնաղ կոյսերն.  
Օ՛, բազմաթիւ սիրող սրտեր  
Ամուսնութեան սուրբ կապերով  
Կըմիանան Արտեմիսի  
Եւ ժամերի զոյգ օրհնութեամբ։

## ՄԵՆԻՊՊ

(Նկառելով Կվաղին)

Ասա, դու մեզ, ծերուկ բարի,  
Զքնաղ, սիրուն այս աղջիկը  
Ճանաշմամ ես, որի հպարտ  
Կեցուածքն ու դիրքն ամենքին է  
Հըրապուրում։ Նրջանիկ է  
Ով որ նորան իւր օջախը  
Կառաջնորդէ՝ իւր թեն առած։

## ԳԵԳԵՍԻՑ

Թոռնուկիս է ձեր ասածը,  
Խսկ անունը՝ Կիամիա. միթէ  
Զտեսաք ինչպէս ուրախ ժպառով  
Խմբի միջից այս կողմ նայեց։

## ՄԵՆԻՊՊ

(Կրկնում է կիսամայն)։

Կըլիտիա, համ...

<sup>1)</sup> Մունետիկ.

- ԳԵԳԵՍԻՑ**      Ամբոխն արդէն  
 Տաճար մտնել է աշխատում:  
**ԴԻՌՆ**      Մնաք բարեւ: Մենք էլ կ'երթանք:  
**ԳԵԳԵՍԻՑ**      (Կանգնեցնելով նոցա):  
 Երկար ինքս էլ ձեզ չեմ պահիլ:  
 Միայն, խնդրեմ, թեթևակի  
 Մի աչք ածէք և դիտեցէք  
 Եփեսոսի Արտեմիսի  
 Արձանիկներն, Վաղուց արդէն  
 Հռչակ ունին անդրիքս ամեն:  
**ՄԵՆԻՊՊ**      (Յած ճայնով Դիոնիս)  
 Հիմա մեզնից ձեռք չի քաշիլ:  
**ԳԵԳԵՍԻՑ**      (Սրահակից բերելով արձան և ցցց առւլով):  
 Տեսէք, որքան ճարտարութեամբ  
 Արուեստդէտն՝ այն հինաւուրց  
 Հսկայ արձանն կարող ձեռքով  
 Մեծ հմտութեամբ, յար և նման  
 Կաւից կերտել, դուրս է բերել,  
 Լեբը կրծքով, դաժան դէմքով:  
 Արծաթափայլ լուսնի շրջան  
 Գլախ չորս դին չքնաղատես  
 Բակ է կազմել: Բակ շուրջն ամեն  
 Պար են բռնել մեղոնների  
 Բոյլ անհամար, եղան գլուխ,  
 Սփինքս անխօս և կարճառիւծ  
 Քանդակուած է շուրջը բոլոր:  
 Միայն ճարտար մի վարպետ է,  
 Որ ստեղծել գիտէ տիպարն:  
 (Յաց առւլով Հերոսարախն):  
 Ահա այնտեղ, մենաւորիկ  
 Անշարժ նստած՝ կարծես ինքն էլ  
 Կաւից թափած, ձուլուած լինի:  
 Իրար երբէք չենք հասկանում,—  
 Դժուար գործ է գլուխ ելնել  
 Միշտ նորա հետ: Ինքահաւան  
 Նւ ինքնասած, յամառ մարդ է.  
 Երազների աշխարհ միայն  
 Յագուրդ կույ նորա տենչին:

Գործարանիս համար անդին  
Գանձ է իսպառ, իւր կոյր մօր հետ  
Ավրում է նա այն տնակում,  
Որ քաղաքը ընծայ բերեց  
Երբ մարտի մէջ հայրը մեռաւ:  
—Ճաշակներիդ յարմար չէ մի,  
Էժան գնով կը զիջանեմ:

## ՏԵՍԱՐԱԿԻ, II

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԼԻՑԻԱ:

ԿԼԻՑԻԱ

(Առաջ վաղելով մանում է աջ կողից և յետ նայելով  
խօսում է),

Ո՞չ, ոչ, երբէք, հեռու ինձնից.  
Անհնար է, էլ դուք ինձ ձեր  
Ճիրանների մէջ չէք տեսնիլ:

(Շատրով վաղելով կահանով, դառնալով գեղեսիսին).

ԱՌԻ, օգնիր ինձ, անուշ պապիկս:

ԳԵԳԵՍԻՅ

Ի՞նչ պատահեց քեզ, զաւակս:

ԿԼԻՑԻԱ

Այլ ևս նոքա չեն երևում:

ԳԵԳԵՍԻՅ

Ում մասին է:

ԿԼԻՑԻԱ

Մէկէլ տեսնեմ

Յանկարծակի սինկիբորներն

Յարձակուեցան ծածուկ վրաս,

Երդում-կրակ ուտելով, թէ

Էլ չեմ իշխիլ ողջ տարի էլ

Զգձգելով նոցա խարել:

Թէ յիրաւի փեսայ ընտրելն

Ազատ կամքի է միշտ թողած,

Բայց և այնպէս, պնդում էին,

Յամառելուս պիտի վերջ տամ...

ԳԵԳԵՍԻՅ

(Պահելով Դիօնիս և Մինիպպին).

Մի քիչ կեցէք, բարեկամներ...

ԴԻՈՆ

Մենք գեռ էինք քեզ մօտ կը գանք:

ԳԵԳԵՍԻՅ

Կեցէք, մի քիչ...

**ՄԵՆԻՊՊ**

(Տանելով Դիմելու)։

Արի, երթանք,  
Այդ կլիտիային անփորձ նայելն  
Դժուար գործ է,—տուն, տեղ ու կին  
Մի հայեացքով մոռցնել կտայի  
(Գնուաց են դեպի տաճարը)։

### ՏԵՍԱՐԱԿ, III

ԳԵԳԵՍԻՑ ԵՒ ԿԼԻՑԻԸ

**ԿԼԻՑԻԸ**

(Շարուշակելով)։

Ես նոցանից հազիւ պրծայ...

**ԳԵԳԵՍԻՑ**

(Նեղանալով)։

Զեռքից վիխսցրիր գտած որսերս,  
Թոյլ չտուիր, որ ծախէի...

**ԿԼԻՑԻԸ**

(Գլխիցն առնելով պսակը)։

Առ փոխարէնն իմ թարմ պսակս.  
Թող ծաղիկներն ու թունուհիդ  
Միսիթարեն ծերուկ սիրտդ։

**ԳԵԳԵՍԻՑ**

Երես առած, սիրուն թոռնուկս,  
Ինչու վարդը մրտենու հետ  
Չես կամենում փոխել անհետ։

**ԿԼԻՑԻԸ**

Մեր դիցանոյն վարդն է սիրում։

(Ըստում է նորա ձեռքից արձանիկը և գառնալով  
վերընեն)։

Ճշմարիտ չէ, ասա դու ինձ  
Ո՛վ Արտեմիս. հօ բարկութիւնդ  
Զը շարժեցը: Դու կոյսերիս՝  
Թևարկողն ես: Լոկ անարատ,  
Մաքուր կոյսը քո հովանին  
Վայելելու արժանի է:  
Նախանձաւոր սիրով նոցա  
Պահպանում ես դու յաւիտեան,  
Առատութեան ոսկեղջիւրից  
Մաքուր, անմեղ ուրախութեան  
Լի պարզեներ շըռայելով,  
Երբէք, երբէք աղջիկներիդ  
Փայփայելով, ով մեր սուրբ մայր,

Բիրտ ու կոպիտ տըղամարդու  
 Գիրկ չես ձգիլ, որ ուրախ է  
 Նոցա մի կերպ քեզնից խլել:  
 Թէև շատ ենք, բայց ամենքըս  
 Ել հաւասար վայելում ենք  
 Խնամք ու սէրդ: Խսկ, տես, պապտ  
 Խւր մէկուճար թոռնուհուն խսկ  
 Պատրաստ է տալ հէնց առաջին  
 Պատահածին: — Պատժիր սորան:

**ԳԵԳԵՍԻՑ** Առանց այն էլ պատժել է ինձ՝  
 Որսերս ձեռիցըս խլելով:  
 Ժամանակ է տուն երթալու.  
 Թէ չէ, գիտես, դեռ աւելի  
 Վլանասների կը հանդիպիմ:  
 Մոյլ ամբոխ է չորս' բոլորըս.  
 Երկու աչք էլ դեռ ուրիշից  
 Պէտք է առնել:

(Չայն է տակիս Հերոստրատին):

Ե՛յ, Հերոստրատ,  
 Դէ՛հ, չուտ արա, գործի կըպիր:  
 Հը՛, չես լսում:

**ԿԼԻՏԻԱ** Թող տուր նորան:  
 Գիտես, որ նա լոկ մի ժամում  
 Շատ աւելի գործ կը շինէ,  
 Քան ուրիշը մի ամբողջ օր:

**ԳԵԳԵՍԻՑ** Ե՛, զզուելի, անպէտք մարդ է:  
 (Երկուան էլ առն են գնում):

### ՏԵՍՄԱՐԿԵԼ, IV

#### ՀԵՐՈՍՏՐԱՏ ԵՒ ՏԻՄԱՐԻՏԱ

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Խւր կաշկանդուած դրութիւնից մի քիչ սթափուելով):—  
 Կանչում էր ինձ, արդեօք, մէկը.

**ՏԻՄԱՐԻՏԱ** (Երկաւով տան շեմքին):—  
 Հերոստըրնատ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Այդ կու էիր,  
 Ինձ կանչողը, մայր իմ:

ԶԻՄԱՐԻՏԱ

Այս,

Առաջնորդիր, որդիս, առաջ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Արի:

(Յանելով դեպի նստարանը):

ԶԻՄԱՐԻՏԱ

(Նստելով):

Տանը ես քեզ երկար

Որոնեցի, Նրբ դու կանուխ

Մահճից ելնում, դուրս ես գնում,

Ո՞վ ինձ արդեօք, կասէ՝ լուսցաւ,

Թէ դեռ խաւար գիշեր է մութ:

Քո «քարի-լոյսն» արև, լուսին

Է ինձ համար:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Վաղուց արդէն

Լուսացել է:

ԶԻՄԱՐԻՏԱ

Աղօթուորի

Զայնից միայն այդ իմացայ,

Խնչու այդպէս հանդէսներից

Հեռու քաղուել՝ մընացել ես:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Աստուածուհուն օրհներդ էի

Ես մեն-մենակ կարդում, գովում.

Նոցա ժընոր, աղմըկալի

Հանդէսները ես չեմ սիրում:

ԶԻՄԱՐԻՏԱ Գուն ու հանդէս՝ քեզ համար չեն:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ես ինչ անեմ, փախչողն ինքն է:

ԶԻՄԱՐԻՏԱ Անգին զաւակս, ինչ, կարծում ես,

Թէ լուսիթեամբ կարող կլինիս

Սրտիդ ցաւերն ինձնից ծածկել:

Կոյր աչքերիս աւելի շուտ

Մատչելի են որդուս սրտի

Ցաւեր լոիկ, խոցերն անհուն,

Գան արևի շողեր փայլուն՝

Քո աչքերիդ:

ՀԵՐՈՍՏՐԱՏ

Խնչու ուրեմն

Հարձ ու փորձով տանջում ես ինձ:

Գիտես բոլորն:

(Յանկարծական եռանդով):

Օ՛, թէ հեռոն,

Հեռնել լինել այս տեղերից  
 Կարենայի, Ել չեմ կարող,  
 Ծնող մայր իմ, տեսնել, տանել,  
 Որ իմ առաջ վայլէ այս վեհ  
 Տաճարն, իսկ ես նորա դիմաց  
 Իրրև անոլէաք, ոչնչութիւն  
 Կանգնած մնամ անփառունակ  
 Շուքի նման և կեանք անցնեմ  
 Անմահութեան հետ կողքէ կողք.  
 Եւ կամ անյայտ, դատարկ ու սին  
 Բանդագուշանք, տեսիլ դառնամ...

**ՏԻՄԱՐԻՑԸ ԻՆՉՈ՛ ԵՍ ՔԵզ դու զրպարտում  
 Խզուր տեղը:**

<b>ՀԵՐՈՍՏՐԱՏ</b>	<b>Տարիները</b>
Գըլորուում են իսկ ես ահա...	Դարիները
<b>ՏԻՄԱՐԻՑԸ Օ՝ դու քեզնում դաղտնի ոյժեր</b>	
Ունիս պահած՝ արեելքի	
Հըմայական բոյսի նըման,	
Որ դեռ երկար ձիգ տարիներ	
Ամուլ ու չոր մնալուց յետ Ել	
Յանկարծ գիտէ ծաղկիլ, փըթթիլ	
Փարթամ, քեզ ծաղկներով.	

**ՀԵՐՈՍՏՐԱՏ ԵՎ ԿՈՂՈՆԻ մէջ շատերը**  
 Խամրում, թռչնում են ծաղկելուց  
 Դեռ շատ առաջ! Յիշում ես դու  
 Այն օրերը: Երբ դեռ մանուկ  
 Գո զգեստի վեշից բռնած  
 Մանրիկ քայլով յետկիցդ  
 Թափառական շրջում էի,—  
 Երբ հօրս մահուան բօթն ստացար,  
 Որ մեր այս վեհ սրբավայրը  
 Պաշտպանելիս՝ հոգին տուեց,  
 Անվախ, կուրծքը պարսիկների  
 Նետերի դէմ քաջ դէմ տալով:

**ՏԻՄԱՐԻՑԸ ՄԻԹԷ աչքերս չկուրացան  
 Հէնց այդ օրուայ դառն յիշատակ  
 Արցունքներից:**

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

Տաճարի մօտ

Խնձ բերեցիր, արտասառաթոր,  
Կրծքիդ սեղմած, քէկ-քէկ ձայնով  
Դու ասացիր.—Անուշ զաւակս,  
Փառքի հասիր, արժանաւոր  
Զաւակ դարձիր արի հօրդ,  
Որ գոռ մարտի դաշտում պատուով  
Արիւն թափեց: Տես, անպատճառ  
Նորան հասնես:—Ողջակիզի  
Սուրբ սեղանի առաջ չոքած  
Աղօթք արի.—Մայր դիցանոյշ,  
Փառք եմ ինդրում, փառք թող լինի  
Բաժինս միայն այս աշխարհում:

## ՏԻՄԱՐԻՑԱՆ Արդարադատ է դիցուհին.

Սրտի խորքից, զերմին բղխած  
Աղօթքներին ունկընդիր է.  
Կոյր պառաւիս աղօթքներով  
Մխիթարանք մեզ կուղարկէ  
Հօրդ կորուստը կը մեղմէ՝  
Քեզ փառք տալով, որի յոյսը  
Կեանքիս թելը դեռ կը ձգէ:

## ՀԵՐՈՍՏՐԱՏ (ՈՉ ՀՈՒՅՈՒՆ)

Դու դեռ կապրես և կը լսես.  
Ողջ ժողովուրդն իմ գործերիս  
Փառքն ու գովքը կանէ, կանէ:

## ՏԻՄԱՐԻՑԱՆ Գիտեմ:

## ՀԵՐՈՍՏՐԱՏ Եւ խնձ, շատ խոր հետքեր

Պիտի թողնեն նոցա մտքի

Յիշողութեան և սրտի մէջ:

## ՏԻՄԱՐԻՑԱՆ Նամանաւանդ՝ մէկի սրտում:

Յաճախ անքուն, երկար գիշերն  
Երբ փրկարար քունն աչքերիցս  
Փախչում, գնում հեռանում է,  
Քո շրթունքներդ իմ ականջիս  
Շշնչում են միշտ մի անոն, —  
Կրքոտ, յուզուած...

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

Օ՛, մի խօսիր,

Լոիր, լոիր...

## ՏԵՍԱԲՈՅՆ, V

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԿԼԻՏԻՆ.

## ԿԼԻՏԻՆ.

(Դուրս է դալիս Գեղեսիսի անից և խօսում է երես  
յետ գործրած)։

Խոկոյն, իսկոյն

Կուղարկեմ նրան, անուշ պապիկս։

## ՏԻՄԱՐԻՏԱՆ.

(Ականջ բնելով)։

Այդ խօսողը կլիտիան չէր։

Արշալոյսի ճռուող, կարծես,

Լինի ձայնը։ Եթէ նա էլ

Ձայն ունենար, անշուշտ այդպէս

Պիտի խօսէր։

## ԿԼԻՏԻՆ.

(Թեթևակի շառագումելով)։

Խոնարհ ողջոյնս,

Մեծարելի Տիմարիտա։

Այս ծոյլ, դանդաղ մարդուն մի քիչ

Նկայ եռանդ, փոքր ներշնչեմ...։

## ՀԵՐՈՍՏՐԱՏ.

Որ էլ նորից կեանք մաշեցնեմ։

Վեհն անկերպարան փոքրի դարձնեմ։

## ԿԼԻՏԻՆ.

Փոքրի մէջ էլ վեհ ես դու միշտ։

## ՀԵՐՈՍՏՐԱՏ.

Խոկ վեհի մէջ՝ փոքր ու չնշին։

## ՏԻՄԱՐԻՏԱՆ 0'.

Կլիտիան-ջան, կասկածանքի

Մուայլ ամպը փէէ, հեռնայ

Նորա ճակտից. դա քեզ համար

Խաղ ու պար է։ Արժէ միայն

Պայծառ օրուայ նման աշերդ,

Հայեացքդ նետես նորա վերայ։

(Անհաստատ բայլքով իւր անակն է դառնում)։

## ՏԵՍԱԲՈՅՆ, VI

ՀԵՐՈՍՏՐԱՏ ԵՒ ԿԼԻՏԻՆ.

## ԿԼԻՏԻՆ.

(Մէ քէշ լւելոց յետոյ)։

Ուրեմն, կերթաս, աշխատելու։

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ո'չ, ոչ. երբէք. չնմ կամենում։

**ԿԼԻԹԻԱ** Մերուկն այնպէս գնահատում է  
Քո աշխատանքդ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Միթէ. իրաւ:  
Քանի՞ դրախմ: Անշուշտ, արդէն  
Հաշուել է նա:

**ԿԼԻԹԻԱ** Յանդիմանել  
Նորա համար, որ իւր օգուտն  
Է փնտուում, արժէ միթէ:  
Զէ որ դրանով է պահպանում  
Մեզ թէ իրեն:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Յանկարծ բանելով նորա ձեռքից):

Մի լաւ նայիր:

Այս վեհ տաճարն, այն հրաշալիքն  
Նորա և քո մեծ նախահօր  
Զեռքի գործն է: Միթէ պապդ  
Շնչել, ապրել, ոսկի դիզել  
Դեռ կարող է: Այս հսկայի  
Շուաքն անգամ կարող չեղաւ  
Նորա աշքից լոյս արևի  
Վառ շողերը վարագուրել,  
Այդ շողերից զլկել նորան:  
Անմահ մարդու երկաթի պէս  
Մանր քայլերն նա չէ լսում.  
Զի էլ զգում, որ իւր թտիի  
Եւ ծանրութեան ներքև ճմլում  
Տըրորում է այդ քայլերը  
Փուչ սերնդի ամբողջ ցեղը:

**ԿԼԻԹԻԱ** Բայց, Հերոսարատ, դորա փոխան  
Մենք չնշում ենք, ցօղաթաթախ  
Օդ ենք ծծում, մեզ հրճուանք  
Է պարգևում լոյս արևի  
Պայծառ շողերն, եւ զեփիւոի  
Անոյշ համբոյըն եւ թարմ ծփանք  
Հանդիստ ծովի, Երբէք, երբէք,  
Ի՞նձ հաւատա, մեծ Պայոնին  
Զեմ նախանձել,—նա մեռած է,  
Խոկ ես՝ կենդան:

## ՀԵՐՊՈՏՐԱՏ

Սխալւում ես:

Նո է կենդան, իսկ մենք՝ մեռած:  
 Խնչնլ արդեօք կարող կլինենք:  
 Մեր խեղճ կեանքի նըպատակը  
 Արդարացնել: Մեծ չեն ծնել  
 Մեզ մեր մայրերն: Անանց, յաւերժ  
 Մի յուշարձան չունինք թողած:  
 Եւ մենք կանցնենք, անհետ կկորչենք  
 Որպէս թէ կեանք իսկ չենք ունեցել:  
 Ահա ինչու մեծ հաճոյքով  
 Կեանքիս վերջին օրերն անդամ  
 Որպէս խղճուկ, չնչին մի որդ՝  
 Զահ բերելուց չէի քաշուիլ,  
 Միայն մի օր, մի օր միայն  
 Զգալ, ապրել հնար տային,  
 Խնչպէս քո մեծ նախահայրդ  
 Եւ ապրել է, եւ զգացել  
 Երբ ամպերի մէջ ծրարուող  
 Եյս տաճարի կամարակապ  
 Բանկը-բարը դրեց իբրև  
 Անմահութեան իւր յուշարձան:

## ԿԼԻՇԻԱ

Միթէ այդշափ չնչին ու քեչ  
 Արժէք ունի անդիական,  
 Մատաղ կեանքը և քեզ համար,  
 Խելակորոյս: Հոգիների  
 Աշխարհն իջիր. Հոմերոսին,  
 Պայիկոնիային ու Ֆիդիասին  
 Դու հարցըռու,—յօժարութեամբ  
 Զեն տայ արդեօք մեռեալների  
 Ամբողջ փառքը, միայն նորից  
 Կեանք առնէին, երիտասարդ՝  
 Թարմ ոյժերով անտառ, պուրակ  
 Զափշբէին. Թարմնորփիթիթ  
 Մաղիկներով զուգած-պճնած  
 Բաժակները մէկ էլ նորից  
 Զեռք առնէին և ջերմ բազկով  
 Սիրուն ուհի մի գրկէին:  
 Նոցա ձեռքի կերտուածքն անդամ

Պարզ ասում են, որ թէ աշխարհ,  
թէ կեանք, թէ խիսդ, ջահելութիւն  
Սիրում, պաշտում էին նոքա  
Նոյն վառ սիրով, ինչպէս՝ ինքս:  
Օ՛, թէ իրաւոնք, ոյժ բաշխէին  
Ինձ աշխարհս, կեանքն ու խինդը  
Զահելութեան հետ միասին  
Մի հնարքով՝ արծաթ թելից  
Հիւսած ամուր ուռկանի մէջ  
Զգել յանկարծ և պինդ փակել,  
Այն ժամանակ, ես գիտէի...

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

Ա՛, երջանիկ,

Անհոգ հոգի:

## ԿԼԻԹԻԱ

Նախանձում ես

Եւ այն բանին, ինչ քեզ համար  
Մատչելի է, եթէ ցանկաս.

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Դառնութեամբ):

Եթէ ցանկամ, ասում ես դու.

## ԿԼԻԹԻԱ

Ա՛խ, Հերոստրատ, թէ մօրդ, թէ քեզ  
Միայն բարիք եմ կամենում:  
Գիտե՞ս որչափ ծանր ու ցաւ էր  
Հէնց ինձ համար, երբ հանդիսին  
Դու թոյլ տուիր, որ ուրիշը  
Մօստ կանգնէ: Միթէ նոքա  
Քեղնից լաւ են,—թէև մի քիչ,  
Քիչ ջահել են,—ինչեր չասես  
Որ ինձ չարին, էլ ինչ խաղեր  
Գլխիս, ասես, որ չքերին,  
Մինչև որ էլ համբերելու  
Ճար չմնաց և ես փախայ.  
Իսկ դու այստեղ...

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

(Դառնացած ձայնով):

Հանգիստ թող ինձ:

Խղճա կլիտիա, հանգիստ տուր ինձ.

## ԿԼԻԹԻԱ

Է՛, շտո բարի, ես գնում եմ:

## ՀԵՐՈՍՏՐԱՏ

Զէ, չէ, մնա:

## ԿԼԻԹԻԱ

Շուտով ահա

Կը բոլորի հանդէսների  
Ամիսն և մենք ամբողջ տարի  
Համբերութեամբ պիտ սպասենք  
Նորա դանդաղ գլորուելուն,  
Մինչև նորից նոր հանդէսներ  
Սահմանելու օրը հասնի:  
Ինչու, ասա, մեր ծէսերը  
Արհամարհում, անդունում ես՝  
Նրք հէնց նորա իրենք են մեզ  
Հրաւէր կարդում: Ուրախ պարից,  
Վայելք, խաղից խուսափում ես,  
Կարծես նքառ քո պիսերիմ  
Եւ հինաւուրց թշնամիդ են:

ՀԵՐՊՈՍՏՐԱՏ Թշնամիս են.

ԿԼԻՇԻԱ

Նոցա համը  
Դու չես առել, անծանօթ ես:

### ՏԵՍԱՐԱՐԱ, VII

#### ԱՌԱՋԻՆՆԵՐԸ ԵՒ ԳԵԳԵՍԻՑ

ԳԵԳԵՍԻՑ

(Դուրս դաշվ իւր անից):

Ի՞նչ եղաւ նա. չէ խոստացար  
Շուտ ուղարկել, հը, զաւակս:  
ԿԼԻՇԻԱ

Դեռ այստեղ է, իմ պապի-ջան...

ԳԵԳԵՍԻՑ

Հերմեն վկայ, ես էլ զիտեմ,

Որ այդտեղ է. հէնց ես էլ այդ

Եմ հարցընում՝ ինչու այդտեղ

Եւ ոչ այնտեղ, գործի կպած:

(Դաշնաւլվ Հերոսարապին):

Ծնյլ անօրէն, չէ որ ես քեզ

Ժամանակին եմ վարձ տալիս:

Եւ այն էլ ինչ սոսկալի վարձ,

Ո՞վ, աստուածներ, թէ կարծում ես,

Որ աշխարհումս հատդ էլ չկայ:

ՀԵՐՊՈՍՏՐԱՏ Նոյն իսկ այսօր, խնդրեմ, գտնես,

Տեղս կանչես: Դու կանխեցիր

Արտայայտել իմ սեփհական

Ցանկութիւնս. ինքդ ասացիր  
Վերջին խօսքը:

**ԳԵԳԵՍԻՑ**                          Մի համբերիր,  
Մի տաքանար, բարեկամս,  
Սիրով կը ներեմ և այս անդամ  
թէ կը զղաս անկեղծ, սրտանց...

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Այս, շատ խիստ, խիստ զղում եմ:  
Մարդ մտածի, թէ ինչպիսի  
Գործի վերայ եմ ջանք թափում  
Տարիներով:

**ԳԵԳԵՍԻՑ**                          (Ալիսոյին):  
Մի ասա ինձ,  
Գյուել է սա, թէ ինչ եղաւ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Մնաս-բարև:

**ԳԵԳԵՍԻՑ**                          Դեռ սպասիր,  
Մի համբերիր, խենթ աստուծոյ:  
Ինքս կը տամ նոյնչափ վարձ, գին,  
Որչափ ուրիշն է խոստանում:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Պարսկաստանի ճոխ ու անթիւ  
Հարստութեան հետ չեմ փսխիլ  
Ազատ, անկախ անդրէգործի  
Խեղճ վիճակը...

**ԳԵԳԵՍԻՑ**                          Մի քիչ կամաց:  
Մետրոդորն է դալիս այստեղ:  
(Մետրոդորն ու Նեպիտը գրադաւած են Խօսակցու-  
թեամբ, որ քիչ առաջ դուրս էին եկել Հերոստրատի-  
տնակից՝ յետէի դժոխց Մետրոդորը բաժանուելով Նե-  
պիտից, որ մտնում է առարք, գիմում է Գեղեցիկն):

### ՏԵՍԱՐԱԿԻ, VIII

**ԳԵԳԵՍԻՑ**                          (Դիմաւորելով նորան):  
Խոնարհ ողջոյն, արժանաւոր  
Խորհրդական:

**ՄԵՏՐՈԴՈՐ**                          (Թեթևակի գլուխ տալով Ակտոյին և Հերոստրատին):  
Ողջոյն և ձեզ:  
Օք ցերեկով քեզ, Գեգեսիյ,  
Որոնելով հոգիս ելաւ:

**ԳԵԳԵՍԻՑ Փառք և հաճոք է ինձ համար:**  
(Դաստիարակ շած հայնով Հեղոսորդակին):

**Խելքի արի:**

(Մետրոդորին):

**Պատրաստ եմ ձեզ  
Մտուայելու: Ի՞նչ կամենաք.**

**ՄԵՏՐՕԴՈՐ Բանն էլ այն է, որ ես՝ այսօր,  
Խորհրդատուս, քեզնից խորհուրդ,  
Դաս առնելու եմ շտապում:**

**ԳԵԳԵՍԻՑ Լսում եմ ձեզ:**

**ՄԵՏՐՕԴՈՐ**

**Այս ըոսէիս**

**Մեծ քրմապետն տարօրինակ,  
Ցուզիչ մի լուր հազարդեց ինձ:  
Նրբ տաճարի սպասուհիքն  
Արտեմիսի անդրին այսօր  
Իւր սրբազն հանդերձներով  
Պձնում էին, յանկարծ տեսան  
Դէմքի վերայ սարսափելի  
Մի մեծ ճեղքուած:**

**ԳԵԳԵՍԻՑ**

**Ե՛, ինչ զարմանք,**

**Փթած փայտը հնութիւնից  
Լսկում է փշտուել:**

**ՄԵՏՐՕԴՈՐ Բայց մի մոռնար, որ ողջ Եփեսն**

**Սրբի տեղ է պաշտում նորան:  
Պարտաւոր ենք ժողովրդի  
Ցոյզ ու խռովին հանգստացնել,  
Նրբ երկիւղած՝ ահ ու դողով  
Սկսէ դատել նա այն մասին,  
Թէ դիցուհին այս նշանով**

**Ի՞նչ է ուզում կամ պահանջում:**

**ԳԵԳԵՍԻՑ Դորանից էլ հեշտ բան կայ մի:**

**ՄԵՏՐՕԴՈՐ Կարծում ես դու...**

**ԳԵԳԵՍԻՑ**

**Ի՞նչ է ուզում**

**Ժողովրդից իւր դիցուհին,—  
Եթէ հարցնէ ժողովուրդը,  
Խօսիր նոցա, հասկացրու՝  
Մեծ դիցուհին կամենում է**

Դէմքի վնասն ուղղուի շուտով  
Ճարտարարումսա մի նուրբ ձեռքով:

**ՄԵՏՐՈԴՐՈՐ** Մեզ խօսք կը տան նորից շինել  
Ճեղքուած մասը արժանապէս,  
Որ նախկինից ամենկին  
Մազ իսկ անդամ պակաս չինի:

**ԳԵԳԵՍԻՑ** Եւ շատ շուտով:

(ՑՍԾ ՊԱԼՎ ՀԵՐՈՍՏՐԱՏԻՆ):

Առաջի կանգնածն

Ճարտար, հմուտ անդրէգործ է:  
Եփեսոսը քանդես, փնտուես,  
Ոչ ոք այնպէս նուրբ, ճաշակով  
Տուած պատուէրդ չի կատարիլ  
Ինչպէս որ սա:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Սկզբում հազիւ ուշադրութիւն էր դարձնում խօսակ-  
ցութեանը, իսկ յետոյ հետեւում է հետզետէ աւելացող  
հետաքրքրութեամբ):

Տես, որ հաշուիդ

Մէջ չխալուես: Երկրորդ անդամ  
Կը թողնէի և կերթայի  
Ես քո մօտից, որպէս զի ես  
Առ յաւլտեանս մերժէի  
Այդ պատուէրը:

**ԳԵԳԵՍԻՑ** Ի՞նչ ասացիր:

Էլ սորանից մեծ, փառաւոր  
Նպատակ գտնել՝ դու չես կարող:  
Մեր ամենքիս փառք ու պարծանք  
Աստուածուհու անդրին ուղղել  
Դու չես ուզում:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Ո՛չ. ոչ և ոչ:

Թիւր մեկնութիւն էք կամենում  
Աստուածային տալ նշանին:  
Աստուածուհու կամքը պարզ է,  
Երտեմիսը չէ կամենում  
Համակ սակու, մարմարիոնի  
Ճոխ բանուածքով իւր տան միջին,  
Որպէս աղքատ ողորմելի  
Ցնցուու մէջ փաթտուած մի կին  
Դարձած լինել, կէս—նորոգած

Դիմագծերով, որ ծանակի  
Նիւթ չդառնայ այն քաղաքն էլ,  
Որտեղ ինքը դարեր հետէ  
Թագաւորել և իշխել է:

**ՄԵՏՐՈԴՈՐ** (Ժպանալով):

Այժմ ինձ համար էլ շատ պարզ է  
Նև քո միաքը:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ**

Արտայայտողն  
Ես ինքս չեմ: Դիցանոյշի  
Ցանկութիւնը՝ փթած փայտի  
Ճեղքուելով իշխանաբար  
Զեր երեսին պարզ ասուած է.  
Բարձր ձայնով նա գոչում է,—  
Վեհ տաճարին և վեհ արձան  
Վայել միայն արժանի է.  
Արձան, անդրի, որ աշխարհիս  
Մահկանացուն դեռ չէ տեսել:

**ՄԵՏՐՈԴՈՐ Եթէ այդպէս՝ ապա ուրեմն**

Իւր տաճարի խոր անկիւնում  
Ողիմպոսի աստուածների  
Հին, մաշշուկ անդրիների  
Շարքում պահեն թող իրենն է՝  
Առ ժամանակ: Այժմ պարզ է:  
Երկրպագու աղօթուորի  
Աչքերն ապշած ողջակիզի  
Սուրբ սեղանի վերայ հիմա  
Կանգնած կը տեսնեն մի նոր արձան  
Համակ ոսկուց, փղոսկըրից,  
Զուտ ոսկու մէջ պղուած-պճնած:

**ԳԵԳԵՍԻՑ**

(Մետրօսորին՝ անբաւական եղանակով):

Բայց բարեկամ, մեկնում ենք մենք  
Խիստ կամացի՝ մէկս այսպէս,  
Խոկ միւսն այնպէս, դեռ չտեսած  
Նոյն խոկ անդրուն հասած վնասն:  
Նկէք մէկ տեղ ամենքս երթանք  
Տաճարի մէջ աչքով տեսնենք:  
Պատրաստ եմ ես երդուել անվախ

Թէ քըմապետ Նւպէյտն, անշուշտ,  
Ուռցըրել է մեծ մասն ինքը:

**ՄԵՏՐՕԴՈՐ** Առաջ անցիր: Ես էլ կը դամ:  
(Գևգեսին գնում է առձար),  
**ՄԵՏՐՕԴՈՐ** (Հերոստրատին):

Քո առաջարկն, անշուշտ, հարուստ  
Մաքերի ծով պիտ երևայ  
Ծերակոյտի աչքի առաջ:  
Վաղուց արդէն ես ինձ ու ինձ  
Որոճացել, չափերկշուել,  
Մաքիս մէջը տուն եմ տուել  
Այդքան յանդունգն մի գաղափար,  
Դու լոկ միայն ձևակերպիր՝  
Մարմին-արիւն դարձրու նորան.  
Նոր արձանիդ նախագիծը  
Ինձ տուր շուտով: Շատ լաւ գիտես,  
Ու Խորհրդի մէն մի անդամ  
Կը հետեի իմ աստծիս,  
Ինչպէս խոնարհ ոչխարի հօտն  
Իրենց հովուի ազդող ձայնին:

(Ցաջ առաջ իւր ժնակարանը):

Ահա տունըս: Վաղն առաւօտ  
Ինձ մօտ արի: Խորհուրդ կանենք,  
Չափենք, կշռենք... իսկ անունըդ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Դեռ շատ վաղ է ինձ այդ մասին  
Հարցեր տալիք: Անունս միայն  
Այն ժամանակ կասեմ, երբ որ  
Հաւատացած կինեմ արդէն  
Թէ քո մտքից այլ ես երբէք  
Նա չի ելնիլ.

**ՄԵՏՐՕԴՈՐ** Մնաս բարեւ:  
Ց'տեսութիւն մինչ առաւօտ:  
(Գնում է առձար),

## ՏԵՍԱՐԱԿԻ, IX

ՀԵՐՊՈՏՐԱՏ ԵՒ ԿԼԻՏԻՆ

## ՀԵՐՊՈՏՐԱՏ

(Չեւաները երկինք բարձրացնելով):

Ո՞վ, դու անմահ աստուածուհի,

Շնորհապարտ եմ քո առաջ.

Աղօթքս հասաւ սուրբ գահոթիու:

## ԿԼԻՏԻՆ

Պապիս մասին միշտ յիշելով

Քեզնից պէտք է շատ նեղանամ,

Բայց տեսնում ես, որ հէնց հիմա

Ուրախանում եմ ես քեզ հետ:

## ՀԵՐՊՈՏՐԱՏ 0՝, վերջապէս, հասաւ, Կիտիա,

Այժմ սրտիս ժամ ցանկալի.

Ինչ որ մանուկ, երազական

Շըշանիս մէջ ձգտում էի

Եւ հառաջում անուրջների,

Վառ ըղձերի բուռն հասակում,—

Ստեղծագործող՝ հոգի տուող

Զեռքի համար մի բարձրագոյն,

Վեհ նպատակ,—այժմ առաջս

Մարմին առած, կանդնած է նա

Եւ խոստանում, հրապուրում է

Փառքի պարգև իմ ճակատիս

Պինդ դրոշմել ց'յաւիտեան:

## ԿԼԻՏԻՆ

Մեզ խեղճերիս՝ անյայտ, շնչին

Եսակներիս կը մոռանաս,

Ի՞նչ խօսք դուրան: Զէ որ ամենքս,

Առհասարակ, շուրջդ բոլոր

Կենդան դիակ ենք քեզ համար:

## ՀԵՐՊՈՏՐԱՏ Քեզ մոռանալ: Կիտիա և քեզ:

Ա՛խ, մի լսիր, ականջ դիր ինձ:

Այժմ միայն կը յանդդնիմ

Սիրտս բանալ, խոստավանել

Ինչի մասին նոյն իսկ այսօր

Շըթունքներս կրծում էի,

Արիւն-լուիկ դարձնում նոցա,

Որ շինի՝ յանկարծ բացուին

Նւ գաղտնիքս աշխարհ հանեն.  
 Քեզ, քեզ միայն կուզեմ փառքից,  
 Որ ինձ չնորհէ: Դու—յաղթութեանս  
 Նքեղ պսակ:

ՊԼԻԹԻԱ

Նւ կարծում ես,  
 Ցնորքների, երազների  
 Աշխարհի մէջ թափառական,  
 Դու երազողդ, թէ կանացի  
 Սիրտն էլ՝ քարից կռած-կոփած  
 Սրտի նման ընկած կշուի  
 Թաթի վերայ, սպասում է  
 Թէ երբ արդեօք ձեր գործերը  
 Նւ ձեր հուշակ նըժարի թևն  
 Իրենց քաշով պիտի թեքեն  
 Դէպի ներքեւ և ապա թէ  
 Արժանանաք դուք էլ նորան:  
 Եթէ այդպէս էք երազում՝  
 Ապա վայ ձեզ: Մեծ-մեծ գործեր,  
 Փառքի տենչանք է սահմանուած  
 Լոկ՝ ձեզ համար: Խոկ մեր սէրը—  
 Երբ էլ լինի, ձեռք կը բերէք:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Այս, վայ մեզ, երբ ձեր սէրը

Մեզ բաշխելով դշխոյարար  
 Ստիպում էք ոտքից ց'զլուխ  
 Կարմրի պուտի պէս կարմրիլ  
 Եւ դու, ասա, կարո՞ղ էիր  
 Սիրել՝ առանց յարդ զգալու:  
 Ես չգիտեմ: Թւում է ինձ,  
 Եւ շատ անգամ, որ ես անշուշտ  
 Կը յարգէի միմիայն նորան  
 Որին սրտով կը սիրէի:

ՀԵՐՈՍՏՐԱՏ Ահա ես էլ պահնջում եմ

Գեզնից մէկտեղ եւ յարդ եւ սէր:  
 Ինձ էլ այժմ թւում է թէ  
 Չես զլանայ շնորհել նոցա:  
 Պես ոչ ոքի չեմ պատահել,  
 Որ ինձ համար քեզնից աւել  
 Անոյշ լինի և սիրելի:

ՊԼԻԹԻԱ

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Զորում է նորա ռռաջ և դրկում է նորա ձեկները):

**ԱՇԽԱ**, իմ կլիտիա:

**ԿԼԻՑԻԱՆ** (Ըսկելով նորա ճակատը):

Դէ, շուտ արա,

Ուրախացիր բաց ճակատով:

Մենք միասին այժմ իսկ կերթանք

Երիտասարդ ու կոյսերի

Հանդէսներին մասնակցելու:

Կուզեն երթալ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Յանկարծ սորի և լնելով):

Ստեղծել, ստեծել

Եմ կամենում:

(Հիսոթափուած):

Եւ չես ուզում

Նոյն իսկ բոպէ զուարճանալ:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** Դործի մէջն է երջանկութիւնս:

Գիշեր ցերեկ պիտի խորհեմ,

Չափեմ, կշռեմ, ստեղծագործեմ

Հետն էլ անոյշ երազներով

Ես երազեմ եւ քո մասին:

Եւ երբ պատրաստ բոլորովին

Անդրուց կընկնի հանդիսապէս

Ծածկող քողը, այն փառաւոր

Պայծառ օրը աստուածային

Փո ուզերի տակ կը փռեմ

Անմահութեանս գանձեր ամեն՝

Եւ դու կրկին ինձ յետ կը տաս

Փառքիս գանձեր, —սիրոյդ անշէջ

Բոցի միջից անցած, զտած՝

Ուկու շիթեր վրան ցօղած:

(Դեկի աշ գնալով: Կանչում է):

Մայրիկ, մայր իմ:

Ահա թէ ով

Հրճուանք կզգայ: Մայրդ միայն:

**ՀԵՐՈՍՏՐԱՏ** (Ոիրազել դառնում է Կլիտիսին):

Կը գաս ինձ հետ: Երթանք մէկտեղ:

[Սառն կերպով]:

Դու նախ գնա, գործդ աւարակիր:

(ՎԱՐԱԿՈՂԹՐՆ ԻՃՈՂԻՄ Է):

(Կը շարունակուի)

8. Ա.